## Արձանագրություն N 2

**«ԵՔ-ԳՀԾՁԲ-17/34» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի**

**ք. Երևան**

**09.11.2017թ.**
**ժամը՝ 10:00**

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա.Ալավերդյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Բաբայան, Վ. Դեմիրչյան, Ս. Շահբազյան, Ա.Գասպարյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լ.Ղավալյան |

### 1. Տեղեկություններ «ԵՔ- ԳՀԾՁԲ-17/34» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

---

(Ա.Ալավերդյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2017 թվականի նոյեմբերի 8-ին, ժամը 10:00-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:*

### 2. «ԵՔ- ԳՀԾՁԲ-17/34» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

---

(Ա.Ալավերդյան)

Գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1 | «Անուշ Պետրոսյան» ԱՁ |
| 2 | «Բեռնային ուղի» ՍՊԸ |
| 3 | «Վարազդատ Սահակյան» ԱՁ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա.Ալավերդյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Նախահաշվային գինը | Առաջարկած գինը | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արժեքը | ԱԱՀ | Ընդհանուր |
| 1 | «Անուշ Պետրոսյան» ԱՁ | 1000000 | 800000 | | 800000 |
| 2 | «Բեռնային ուղի» ՍՊԸ | | 190000 | 38000 | 228000 |

3.2 Վերը նշված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա.Ալավերդյան)

4.1 «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին: «Բեռնային ուղի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացի հայտի ապահովումից, որը ներբեռնված է armeps համակարգի մեջ, բայց ֆայլը վնասված է և հնարավոր չէ արտատպել: «Վարազդատ Սահակյան» ԱՁ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթում միայն նշված է գնային առաջարկը, սակայն մնացած բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ գնային առաջարկը և հայտի ապահովումը առկա չեն: Վերոնշյալից ելնելով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Բեռնային ուղի» ՍՊԸ-ի և «Վարազդատ Սահակյան» ԱՁ-ի հայտերը, որպես հրավերի պահանջներին անհամապատասխան:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| «Անուշ Պետրոսյան» ԱՁ | **Բավարար** |
| «Բեռնային ուղի» ՍՊԸ | **Անբավարար** |
| «Վարազդատ Սահակյան» ԱՁ | **Անբավարար** |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 5. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

---

(Ա.Ալավերդյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ **«ԵՔ-ԳՀԾՁԲ-17/34»** ծածկագրով գնանշման հարցման 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Անուշ Պետրոսյան» ԱՁ–ն, որպես բավարար գնահատված միակ մասնակից:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

### 6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ծանուցելու մասին

---

(Ա.Ալավերդյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 1**0.11.2017թ.** հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

### 7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ա.Ալավերդյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, բայց ոչ ուշ քան 15.11.2017թ. ժամը 10:00-ին Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | [signature] | Ա.Ալավերդյան |
| Անդամներ՝ | [signature] | Ա. Բաբայան |
| | [signature] | Վ. Դեմիրչյան |
| | [signature] | Ս. Շահբազյան |
| | [signature] | Ա.Գասպարյան |
| Համակարգող՝ | [signature] | Լ. Ղավալյան |